ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.09.2019
343-03

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
Արարատ Միրզոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2019 թ.-ի սեպտեմբերի 12-ի էլեկտրոնային 342-73 հացմանն ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Լիլիթ Մինասյան 2019 թ.-ի սեպտեմբերի 17-ին ԱԺ ին անունից ուղարկել է պատասխան գրություն, որով տեղեկացնում է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված հարցումները կարող են պաշտոնական համարվել էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում միայն:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տեղեկացնել, թե ինչու է Ազգային ժողովի աշխատակազմը հրաժարվում էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունները համարել պաշտոնական, այն դեպքում, երբ Կառավարության կողմից գործարկված Էլեկտրոնային հարցումների միասնական e-request հարթակի միջոցով ուղարկված էլեկտրոնային բոլոր հարցումներին պատշաճ ընթացք է տրվում և պատասխանվում առանց էլեկտրոնային ստորագրության առկայության: Ստացվում է, որ ԱԺ-ն ձևավորում է ՀՀ Կառավարությունից տարբերվող, նույնիսկ հակասող իրավակիրառ պրկտիկա, որը նաև հակասում է ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման ընդհանուր տրամավանությանը:

Միաժամանկ արձանագրենք, որ ԻԱԿ-ի նախորդ հարցումը ևս ուղարկվել է e-request հարթակի միջոցով, առանց էլեկտրոնային ստորագրության: ԱԺ աշխատակազմը դրան պատասխանել է ՏԱ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան